

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն հ.14

ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի գիտական
խորհրդի 06.07.2017թ. նիստի

Օ Ր Ա Կ Ա Ր Գ`

1. Հաղորդում քննաշրջանի արդյունքների մասին:
2. Մրցույթ ակտուարական մաթեմատիկայի և ռիսկերի կառավարման ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման համար:
3. Մրցույթ ակտուարական մաթեմատիկայի և ռիսկերի կառավարման ամբիոնում ասիստենտի պաշտոնի տեղակալման համար:
4. Ասպիրանտների թեկնածուական ատենախոսությունների թեմաների, գիտական ղեկավարների հաստատման հարցը:
5. Առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման հարցը:
6. Ֆակուլտետի աշխատակիցների դասախոսությունների ձեռնարկները ԵՊՀ կայքում տեղադրելու հարցը:

Գիտական խորհրդի 44 անդամներից ներկա էին 30-ը, այդ թվում 10 դոկտոր, 14 գիտության թեկնածու:

1. **Լսեցին** - Դեկանի տեղակալ Ա.Թասալաքյանի հաղորդումը քննաշրջանի արդյունքների մասին:

Հաղորդումը ընդունվեց ի գիտություն:

2. **Լսեցին** – Ակտուարական մաթեմատիկայի և ռիսկերի կառավարման ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման հարցը:

Ակտուարական մաթեմատիկայի և ռիսկերի կառավարման ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար դիմել է ֆիզ.մաթ. գիտ. թեկնածու, դոցենտ Նարեկ Արմենի Մարտիրոսյանը:

Փակ, գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա գիտական խորհուրդը

- Որոշեց** - Ֆիզ. մաթ. գիտ. թեկնածու, դոցենտ Նարեկ Արմենի Մարտիրոսյանը ընտրվել է ակտուարական մաթեմատիկայի և ռիսկերի կառավարման ամբիոնի վարիչ:

3. Լսեցին – Ակտուարական մաթեմատիկայի և ռիսկերի կառավարման ամբիոնում ասիստենտի պաշտոնի տեղակալման հարցը:

Ակտուարական մաթեմատիկայի և ռիսկերի կառավարման ամբիոնի ասիստենտի պաշտոնի համար դիմել է Ֆիզ.մաթ. գիտ. թեկնածու Անահիտ Գևորգի Գուլյանը:

Փակ, գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա գիտական խորհուրդը

Որոշեց - Ֆիզ. մաթ. գիտ. թեկնածու Անահիտ Գևորգի Գուլյանը ընտրվել է ակտուարական մաթեմատիկայի և ռիսկերի կառավարման ամբիոնի ասիստենտի պաշտոնում:

4. Լսեցին - Ասպիրանտների թեկնածուական ատենախոսությունների թեմաների, գիտական ղեկավարների հաստատման հարցը:

Որոշեցին – Հաստատել

ա/ ասպիրանտ Հովհաննես Արթուրի Կոստանյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Ինֆլյացիայի ոչ դրամական գործոնները», Ը.00.08. – մաթեմատիկական տնտեսագիտություն մասնագիտությամբ:

Գիտական ղեկավար հաստատել տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վասակ Հովհաննեսի Թորոյանին:

բ/ ասպիրանտ Գոռ Արայիկի Խաչատրյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Պարտքի կառավարման դինամիկ ստոխաստիկ մոդել», Ը.00.08. – մաթեմատիկական տնտեսագիտություն մասնագիտությամբ:

Գիտական ղեկավար հաստատել տնտ. գիտ. դոկտոր Ռուբեն Ալբերտի Գևորգյանին:

5. Լսեցին – Առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման հարցը:

Ներկայացվեց ասպիրանտ Մ. Սաֆարյանի (մաթեմատիկական անալիզի և ֆունկցիաների տեսության ամբիոն) կատարած աշխատանքները ըստ անհատական պլանի:

Որոշեցին - Ատեստավորել երկրորդ տարվա ասպիրանտ Մհեր Սաֆարյանին - Ա.01.01.
- մաթեմատիկական անալիզ մասնագիտությամբ:

6. Լսեցին – Ֆակուլտետի աշխատակիցների դասախոսությունների ձեռնարկները
ԵՊՀ կայքում տեղադրելու հարցը:

Խորհրդի նախագահ

Ա.Ա.Սահակյան

Գիտքարտուղար

Ս.Հ.Զիլավյան